ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՑ 5-Ը ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՓԱՐԻԶ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Խաչիկ Սողոմոնյան

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Ֆրանսիայի Հանրապետություն, ք. Փարիզ, 2024թ. հունիսի 3-ից 5-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Միջազգային տրանսպորտային ֆորումի քարտուղարություն

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցելու Միջազգային տրանսպորտային ֆորումի Ավտոմոբիլային տրանսպորտի խմբի 2024թ. հունիսի 4-ի արտահերթ հանդիպմանը

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների ոլորտում ՏՆԵԿ բազմակողմ քվոտայի և դրա զարգացման հետ կապված տարբեր հարցեր, Հայաստանում Որակի խարտիայի պահանջների ներդրման ուղղությամբ առաջընթացի ներկայացում, ՏՆԵԿ թույլտվությունների ամբողջական թվայնացման կարգավիճակը, «Օգտագործողի ուղեցույց 2022»-ում առաջարկվող փոփոխությունները, բեռնատարի թափքում պահանջվող փաստաթղթերը:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Տեղի են ունեցել հանդիպումներ Միջազգային տրանսպորտային ֆորումի Ավտոմոբիլային տրանսպորտի խմբի նախագահ Ռայմոնդ Շերպենիսեի, խմբի ղեկավար Յուստաս Ռասոմավիչյուսի հետ, քննարկվել են Հայաստանում Որակի

խարտիայի պահանջների ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքներին վերաբերող հարցերը:

Ելույթով ներկայացվել է Հայաստանում Որակի խարտիայի պահանջների ներդրման ուղղությամբ կատարված և ընթացիկ աշխատանքները:

Քննարկումներ են եղել Իտալիայի, Մոլդովայի, Ռումինիայի, Վրաստանի, Գերմանիայի ներկայացուցիչների հետ երկկողմ բեռնափոխադրումներին վերաբերող հարցերի վերաբերյալ:

Ռումինիայի կողմից բարձրացվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից ճանապարհային հարկի գանձման հարցը ՏՆԵԿ թույլտվությունների կիրառման պարագայում: Ներկայացվել է պարզաբանում, որ Որակի խարտիայով ՏՆԵԿ թույլտվությունների կիրառման դեպքում նման պահանջ սահմանված չէ, և հետևաբար գործում է ազգային օրենսդրությունը:

2024թ. հունիսի 5-ին կայացել է հանդիպում Ավտոմոբիլային տրանսպորտի խմբի ղեկավար Յուստաս Ռասոմավիչյուսի և ենթախմբի ղեկավար Ինդրա Գրոմուլեի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանում Որակի խարտիայի պահանջների ներդրման և կիրառման նպատակով մշակված (միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների մասնագի-տական վերապատրաստմանը, փոխադրումների մենեջերի մասնագիտական որակավորմանը, գործարար համբավին և դրա կորստին վերաբերող) ենթաօրենսդրական ակտերը:

7. <u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>

Ընդունվեց որոշում 2025թ. դեռևս չանցնել ՏՆԵԿ թույլտվությունների ամբողջական թվայնացման և կիրառել թղթային տարբերակները, «Օգտագործողի ուղեցույց 2022»-ում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ քննարկումների արդյունքով այն թարմացնել և ուղարկել երկրներին կարծիքի, Ավտոմոբիլային տրանսպորտի խմբի հաջորդ հանդիպումն անցկացնել 2024թ. հոկտեմբերի 11-ին: Հայաստանը կշարունակի աշխատանքը ենթաօրենսդրական ակտերի ընդունման ուղղությամբ և Միջազգային տրանսպորտային ֆորումի քարտուղարություն կներկայացնի թարմացված հայտ:
Փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հաշվի առնելով մասնակից երկրների հետ երկկողմ բեռնափոխադրումներին վերաբերող հարցերի քննարկումները և Միջազգային տրանսպորտային ֆորումի Ավտոմոբիլային տրանսպորտի խմբի հանդիպումների արդյունքները՝ ՀՀ դիրքերն ամրապնդելու համար պետք է ներգրավվեն նաև ՀՀ դեսպանությունները: Այդ երկրներում ակտիվ են և մեծ ազդեցություն ունեն բեռնափոխադրողների ասոցիացիաները: Հարկավոր է տեղում ակտիվ աշխատանք ծավալել այդ ասոցիացիաների հետ: Քանի որ Փարիզում է գտնվում Միջազգային տրանսպորտային ֆորումի կենտրոնական գրասենյակը, իսկ 2024թ. հոկտեմբերի 11-ին Ավտոմոբիլային տրանսպորտի խմբի հանդիպմանը քննարկվելու է Հայաստանի՝ Որակի խարտիայի պահանջների ամբողջական կատարման հարցը, ապա պետք է նաև Ֆրանսիայում ՀՀ դեսպանության ակտիվ աշխատանքը Միջազգային տրանսպորտային ֆորումի քարտուղարության հետ: Բացի այդ, հաջորդ տարի Միջազգային տրանսպորտային ֆորումի փոխնախագահ է լինելու Ադրբեջանը, որը նախորդ տարի է ստացել հաստատումը Ադրբեջանում Որակի խարտիայի պահանջների ներդրման ուղղությամբ: Մինչ նիստը Ֆրանսիայում Ադրբեջանի դեսպանն Ադրբեջանի պատվիրակության հետ հանդիպումներ է ունեցել Միջազգային տրանսպորտային ֆորումի քարտուղարության հետ:

9. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ**

10.06.2024թ.